

ՕՐԱԹԵՐԹ

ԲԱՐԻՆ ՈՒ ՍԵՐԸ


Աշխարհում կար, ապրում էր մի լուսանկարիչ: Լուսանկարիչ էր՝ բարձրակարգ ու հմուտ: Կը տիրապետէր իր գործի ամէն հնարքներուն ու նրբութիւններուն: Հոգի ու սէր կը դնէր իր ամէն գործերու մէջ: Անոր աշխատանքները կը հասնեն դեղարուեստական մակարդակի: Ունենալով արուեստագէտի հոգի եւ ճաշակ, կը գնահատէ արուեստը եւ շատ կը սիրէ կարգալ: Ունի բարի սիրտ եւ մեծ սէր: Մեծ սէր՝ իր գործի, կեանքի, արուեստի, գրականութեան, մարդու, հայրենիքի հանդեպ:

Նկարել անոր եւ զգալ իւրա-յատուկ ոգին: Իսկ այդ առիթն՝ ու հանդիպումը շատ կ'ուշա-նար: Եւ այդքան շատ սպաս-ւած հանդիպումը չէր լինի, եթէ չլինէր Փօլ Գալինեանի մաս-նագիտական հնարամտութիւնը եւ քանդակադորձ Վարազ Սա-մուէլեանի բարեհաճութիւնը, որ Սարոյեանի մեծ բարեկամն էր:

Երբ ներկայացաւ Փօլը եւ յայտնեց լուսանկարչու նպա-տակը, Սարոյեանը խոժոռուեց եւ նետեց.

- Կորուսէ՛:

Երկու հայերու հանդիպումը



ՓՈԼ ԳԱԼԻՆԵԱՆ

Փօլ են անուանել իրենց երրորդ զաւակը Խարբերոյցի Հրանդը եւ Մարաշցի Հայկու-հին: Փօլը փոքր տարիքէն կը փափարի լուսանկարիչ դառ-նալ: Անոր կը գրաւէր այդ պզտիկ գործիքը, որ կախար-դական կը թուէր: Նախ՝ ինք-նաշխատութեամբ, ապա ուսա-նելով «Նիւ-Եորք Ինսթիթյութ ալ Ֆրէմալիթի» տիրապետեց ոչ միայն այդ պզտիկ գոր-ծիքին, այլ շարժանկարի ար-տադրութեան արուեստագէտի ստաիճան առաւ: Անոր անունը գիտէր եւ զինքը կը ճանչնար իր բարեկամներու, ծանօթներու շրջանակը եւ քիչ աւելի: Իսկ այսօր՝ Փօլ Գալինեանի ա-նունը գիտէ իւրաքանչիւր հայ, գիտեն դրականութեան եւ ար-ւեստի մարդիկ եւ այն մարդիկ, որ գիտեն Սարոյեանին:

Ամէն մարդ, ամէն ստեղծա-գործող ու արուեստագէտ իր կեանքի մէջ աստեղային ժամ կ'ունենայ: Կ'ունենայ մտքի անսահման թռիչքներ, երեւա-կայութեան պայծառութիւն...

Փօլ Գալինեանի աստեղային ժամը սկսուեց, այն պահուն, երբ հանդիպեց համաշխարհա-յին հռչակ վայելող, ամերիկա-հայ գրող՝ Ուիլիլըմ Սարոյ-եանին: Որպէս հայ մարդ եւ ընթերցող՝ մեծ ցանկութիւն ունէր ծանօթանալու Սարոյ-եանի հետ: Իսկ որպէս լու-սանկարիչ՝ մեծ տենչանք մը՝

առաջին պահին այնքան ալ յա-ճելի չէր: Բայց հայ մարդու հոգուն այնքան հարազատ երգ մը անոնց սրտերը շերտաբեր, հոգիները մերձեցուց: Լուսանր-կարչի մարդկային վարժուները ու մեծ սէրը գրողի հանդէպ, յապիկցին Սարոյեանի՝ Մեծե-րուն յատուկ, կամակորու-թիւնն ու քմահաճութիւնը: Եւ սկսուեց մի լաւ բարեկամու-թիւն, որ գրողի մահէն հաջ-պիտի աճէր ու դառնար նախ լուսանկարների սահիկներ, ապա՝ փաստագրական ֆիլմ, որ փառք պիտի բերէ ոչ միայն լեզունդ դարձած գրողին, այլ նաեւ լուսանկարչին ու այն ժո-ղովուրդին, որի զաւակներն են իրենք:

«Ուիլիլըմ Սարոյեան, Մարդը, Գրողը» վաւերագրական շար-ժանկարը տարիների փորձա-նութիւն ունեցող լուսանկարչի հմտութեան եւ Սարոյեանի հանդէպ ունեցած սիրոյ ու յարգանքի համադրութիւնն է:

Ֆիլմի մէջ օգտագործած է հին լուսանկարներ՝ գրողի ըն-տանիքի, երիտասարդ և պա-տանի տարիների, իր նկարած լուսանկարները, շարժանկարա-յին արձանագրութիւններ, անդ-լիքէն, հայերէն ունեցած ե-լոյթները, որ գրողը կը խօսի իր, իր ծնողների, իր ընտանիքի մասին: Կը խօսի զրականու-թեան, իր հայ ինքնութեան, Ֆրէդնոյի հայ կեանքի, իր

նման ազգի խորհրդանիշ դարձած Արամ Խաչատուրեանի մասին: Սա ֆիլմարտադրողի հնարքն է, որ ըսուծը Սարոյ-եանի խօսքով աւելի համոզիչ դարձնէ: Մարդկայնութեան բարութեան ու սիրոյ երգչին ամէնը կը սիրեն, կը վստահեն ու կը հաւատան:

Փօլ Գալինեանի սէրը այն-քան մեծ է գրողի հանդէպ, որ ոչ մեկ բան կրնար ետ պահել իրեն ֆիլմ նկարելու միտքէն: Ֆիլմի արտադրութեան ամէն ծախսերը անձնական միջոց-ներով է կատարուած, եւ ուիլը երկար ու ձիգ տարի՝ իր ընտա-նիքի անդամների աջակցու-թեամբ, զբաղուել է նկարահա-նումներով: Համոզու՞մ սւնե-նալով, որ ներկայ դարը տեսո-ղութեան դար է, ցանկացել է օր առաջ ֆիլմ դարձնել մեծ գրողի կեանքը՝ հաւատալով, որ շար-ժանկարի միջոցով աւելի դի-ւրին ու գործնական է ճանչցնել հայ ժողովուրդը օտարներուն:

Երկար որոնումներից, աշ-խատանքներից, ուսումնասի-րութիւններից ու մեծ նուի-րումից ծնուեց ֆիլմը: Ծնուեց ու ցնցեց արուեստի ամբողջ աշ-խարհը: Միջազգային փառա-տօններ, մրցոյթներ, դափնի-ներ, մրցանակներ, ճանաչում ու ժողովրդականութիւն: Իր շահած բազմաթիւ մրցանակ-ները կը վկայէն ֆիլմի եւ՝ նկարներու, եւ՝ երաժշտութեան, եւ՝ ներայացման ձեւի, եւ՝ նկա-րահանումների եւ իր ձեւի մէջ՝ ամբողջական եւ կատարեալ ըլ-լալը: Ֆիլմի կատարեալ ըլլալ-ուն աշխատանքի մեծ բաժին ունեն երաժշտութեան հեղի-նակ՝ Փօլ Նազլիկեանը, հայազ-գի ծանօթ դերասան Մայքըլ Օհանեան-Քանըրը,

Գալինեան ընտանիքը:

Սարոյեանը մեր ազգի հպար-տութիւնն է: Ան իր գրակա-նութեամբ այնքան մեծ գործ ըրաւ իր ժողովուրդի համար, որ մեղանից ամէն մէկը մեծ պարտք ունի մեր ազգը եւ մը-շակոյթը օտարներուն ներկա-յացնող Գրողի-հանդէպ:

Այս ֆիլմով Փօլ Գալինեանը իր սէրը յարգանքն ու հիա-ցումը կը յայտնէ գրողին, իսկ որպէս հայ մարդ՝ կը կատարէ իր պարտքը ազգի եւ ազգ ներ-կայացնողի նկատմամբ: Շնոր-հելով Սարոյեանի հետ, ինքն ալ մեծցաւ, մեծցաւ եւ այսօր Սա-րոյեանով կը ճանաչեն իրեն, Սարոյեանի լուսանկարի քով կը զրուի իր լուսանկարը, Սարոյ-եանի անուան հետ կը հօլովուի Գալինեան անունը:

Սարոյեանի ստեղծագործու-թիւններէն բարութիւն ու սէր կը ծորայ մարդոց վրայ, իսկ այս ֆիլմէն՝ սէր ու բարութիւն կը կաթի:

ԱՆԺԻԿ ԿԱՆԻՄԵԱՆ Աղեքսանդրիս

Ք Ա Ջ Ա Լ Ե Ր Ե Ց Է Ք
Հ Ա Յ Թ Ե Ր Թ Ը